ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԵՔ-ԴՄ-08

ք. Երևան

15.10. 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից «Մունետիկ» մանկապատանեկան մշակութային ՀԿ-ն, ի դեմս ՀԿ-ի ղեկավար՝ Հրաչյա Համբարձումյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115 Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001 Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը (այսուհետ որոշումներ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 10-ի «Կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» N 1692-Ա/2 հրամանը, Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության կողմից դրամաշնորհների հատկացման մրցույթի հանձնաժողովի 24.09.2021թ. N 04/21 արձանագրությունը «Մշակութային շարժում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել 2635.2 հազար (երկու միլիոն վեց հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. Կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. Կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.10. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարվելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.11. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և հաշվետվությունը:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և

պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1 կետում սահմանված գումարի 80%-ը կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո, իսկ 20%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

5.2. Համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման և հաշվետվությունների ընդունման ժամկետը մինչև 2021 թ. դեկտեմբերի 15-ն է:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը

հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Մունետիկ» մանկապատանեկան մշակութային ՀԿ
ք. Երևան, Ջիվանի 16, 2-րդ արվեստանոց munetik_haj@yahoo.com
բանկ՝ Բիբլոս բանկ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸՄ Մալաթիա մ/ճ, ք. Երևան, Անդրանիկի 113/1 Հ/Հ 2140001275290100, ՀՎՀՀ02562717 ՀԿ-ի ղեկավար՝
Հրաչյա Համբարձումյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 1
2021թ. հոկտեմբերի 15-ին
կնքված N ԵՔ-ԴՄ-08 պայմանագրի

«Մշակութային շարժում»
դրամաշնորհային ծրագրի
Ծրագրի նկարագրություն

Ներկայացված ծրագրի հիմնախնդիրներն են. երիտասարդ ստեղծագործողների սոցիալական, զբաղվածության, ինքնաարտահայտման և նոր գիտելիքների ձեռքբերման խնդիրները, հասարակ իրերն այլ տեսանկյունց դիտարկելը:

Կարիքի հիմնավորում. այն վերոնշյալ խնդիրները, որոնք առկա են երիտասարդ ստեղծագործողների շրջանում, հնարավոր չէ լուծել առանց միջամտության և այս ծրագրի իրականացումը զգալի խթան կհանդիսանա այս հարցում: Ծրագրով նախատեսված թիրախային խումբ հանդիսացող երիտասարդ ստեղծագործողների վերոնշյալ խնդիրներով այսօր, ցավոք, որևէ մարմին չի զբաղվում. առկա են միայն տեղայնացված մոտեցումներ: Վստահ ենք, որ հենց այս ձևաչափը կլուծի այդ խնդիրները՝ երիտասարդներին սովորեցնելով նորովի ընկալել և այլ կերպ անդրադառնալ իրենց խնդիրների լուծմանը: Տալով նրանց անհրաժեշտ գիտելիքներ և հնարավորություն՝ ծրագրի ընթացքում կսովորեցնենք նմանատիպ ծրագրեր կամ միջոցառումներ կազմակերպել ինքնուրույն, նրանց հետ կապ կպահենք նաև հետագայում մեր «Մունետիկ» հկ կողմից 2022թ. ամռանը կայանալիք նմանատիպ ծրագրի ժամանակ, որը կլինի խեցեգործական ուղղվածությամբ (նրանցից առավել կարիքավորներից մի քանիսին ընդգրկելով կրկին կնպաստենք նոր գիտելիքների ձեռքբերման հարցում): Ծրագիրը կարևոր է նաև նրանով, որ մասնակիցներն իրենց ձեռքբերած նոր գիտելիքներով ինքնուրույն կհոգան իրենց խնդիրները, կօգտագործեն նոր հմտությունները՝ ակամայից աջակցելով նաև գրագետ տուրիզմի զարգացմանը, ինչպես նաև թափոններն օգտագործելով որպես ինքնաարտահայտման և բիզնեսի միջոց: Ներկայացված ծրագիրը սկզբնական շրջանում իր դրական ազդեցությունը կունենա ՀՀ երիտասարդների մի փոքր խմբի աշխատատեղի և սոցիալական խնդիրների լուծման գործում, սակայն փորձի փոխանակման և բազմապատկման էֆեկտի շնորհիվ կարող է ավելի ընդլայնել իր ազդեցության շրջանակները՝ ներգրավելով ավելի մեծ թվով երիտասարդների:

Ներկա վիճակը. բազմաթիվ մշակութասեր երիտասարդներ, չունենալով համապատասխան նոր հմտություններ, հին խնդիրներին նոր լուծումներ տալու գաղափարներ, ստեղծագործական նյութեր գնելու հնարավորություն, չկարողանալով լուծել իրենց սոցիալական և զբաղվածության հարցերը, հաճախ կամ ստիպված են լինում նոր մասնագիտություն փնտրել, կամ մեկնել արտերկիր՝ նոր հնարավորությունների ակնկալիքով, կամ ուղղակի մեկուսանալով սպասում են մի ինչ-որ դրական առաջարկի:

Ինչու՞ է անհրաժեշտ. ներկայացված ծրագրում հաշվի են առնված ինչպես թիրախային խմբի համար առաջնային հանդիսացող խնդիրները (սոցիալական, զբաղվածության), այնպես էլ օրեցօր տարածվող թափոնների խնդիրները՝ դրանք արվեստի գործերի և բիզնեսի վերածելու ճանապարհով: Նշված խնդիրների լուծման պարագայում վստահաբար կարելի է ասել, որ եթե ոչ ամբողջությամբ, ապա զգալիորեն կնվազի նրանց՝ երկրից դուրս աշխատանք փնտրելու միտումը: Ծրագրի ավարտին վերապատրաստված այս երիտասարդ մշակույթի գործիչներն իրենց ստացած նոր գիտելիների միջոցով ակամայից կնպաստեն նաև այլ խնդիրների դրական լուծմանը, օրինակ՝ զբոսաշրջիկների հետ աշխատելով կօգտվեն մարզաբնակ վարորդների ծառայություններից, զբոսաշրջիկներին ուղեկցելով տարբեր տեսարժան վայրեր, կնպաստեն տուն-արվեստանոց կոնցեպտի, գյուղական համայնքների զբոսաշրջային տուրիզմի զարգացմանը: Հնարավոր է՝ հենց իրենք ցանկանան իրենց տունը վերածել արվեստանոց-հյուրատան կամ կհուշեն մարզաբնակ այլ ստեղծագործողների, որպեսզի տեսարժան վայրերին մոտ գտնվող իրենց տները վերածեն արվեստանոց-հյուրատան: Ծրագրի իրականացումն անհրաժեշտ է, քանի որ ՀՀ մարզերի 20 երիտասարդներ ծրագրի ավարտին կլուծեն ինչպես իրենց, այնպես էլ իրենց շրջակա միջավայրի բազմաթիվ խնդիրները:

Կազմակերպության փորձառությունը

Կազմակերպության առաքելությունը և նպատակները. Միջազային և հանրապետական հավաքների, սիմպոզիումների, ճամբարների և ամառային ակադեմիաների կազմակերպում, համագործակցություն միջազգային և տեղական համանման կազմակերպությունների հետ: Աշակերտների, պատվիրակությունների փոխանակում՝ «Մունետիկ» 2002-ի և Колесо Поцсии Պերեսլավլ Զալեսկի միջև, Փոխադարձ ցուցահանդեսների կազմակերպում, փոխայցելություններ (Փարիզ, Սալոնիկ, Լոնդոն): Հանրապետական տոնախմբություններին համապետական մրցույթների կազմակերպում, երեխաների ներգրավում այդ մրցույթներին: Նախօրոք պատվիրված նկարազարդ օդապարուկների օդային մրցույթների կազմակերպում:

Իրականացրած ծրագրեր. «Մունետիկ» հասարակական կազմակերպությունը հիմնադրման օրվանից ի վեր իրականացրել է բազմաթիվ համահայկական և միջազգային սիմպոզիումներ և ծրագրեր գեղանկարչության, խեցեգործության, ինչպես *նաև կերպարվեստի այլ բնագավառներում: Ստորև ներկայացված են վերջին* տարիներին իրականացված նշանակալի ծրագրերից մի քանիսը.

«Մունետիկ» հկ-ն 20.08.2020թ.-20.10.2020թ. առցանց սկզբունքով կազմակերպել և իրականացրել է «Հայաստանը մեկ կտավ, Իջևան 2020» 2-րդ միջազգային երիտասարդական գեղանկարչական սիմպոզիում -ծրագիրը, հովանավոր՝ ՀՀ Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի նախարարություն: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է՝ 1,395,700 ՀՀ դրամ: Ծրագրի նպատակն էր՝ նպաստել հայ երիտասարդ ստեղծագործողների մասնագիտական զարգացմանը և ծանոթացնել

արվեստում ինքնաարտահայտման նոր ձևերին: Ծրագրով նշված բոլոր չորս արդյունքները հաջողությամբ իրականացվել են, դրանք էին. 1. Նորարարական սկզբունքներով ստեղծված աշխատանքներ, 2. մասնակիցների աշխատանքների ցուցադրությունը համացանցում էլեկտրոնային եղանակով և ֆիլմի տեսքով, 3. Կատալոգի տպագրումը արվեստաբանների խոսքով ու գեղանկարչական աշխատանքների տպագրությամբ, 4. Տեխնիկական նոր գիտելիքներով վերազինված երիտասարդ մասնագետներ: 2017թ. իրականացրել ենք նաև «Հող Ջուր Կրակ և Գաղտնիքներ-2017» մշակութային սիմպոզիում-ծրագիրը: Այդ ծրագրի շրջանակներում ստացել ենք 1,967,780 դրամի չափով դրամաշնորհ: Նպատակն էր՝ ծանոթացնել երիտասարդներին խեցեգործության ոլորտի միջազգային չափանիշներին, եվրոպական առաջադեմ և նորարար դպրոցների զարգացման փորձին, նպաստել հայ երիտասարդների զարգացմանը կերպարվեստի ու խեցեգործության ոլորտում և արվեստում ինքնաարտահայտման նոր ձևերում, ինչպես նաև պատրաստել նրանց միջազգային բիենալեներին: Ծրագրի ավարտին բոլոր մեր նպատակները իրագործվել են և մասնակիցները ծրագրի ընթացքում ստեղծել են ժամանակակից սկզբունքներով և տեխնիկայով ազգային արվեստը համադրած աշխատանքներ, որոնք մենք հանրահռչակել ենք ծրագրի ավարտին կազմակերպված ցուցահանդեսով, նկարահանված ֆիլմով, տպագրված կատալոգով: 2011թ-ին՝ «Ռակու-2011, Հող, կրակ և ջուր» խեցեգործական միջազգային սիմպոզիում երիտասարդական ծրագրի շրջանակներում՝ մոտ 200,000 դրամի չափով: Նպատակն էր՝ կազմակերպել միջազգային խեցեգործական սիմպոզիում, մասնակիցներին ուսուցանել Իտալական, Անգլիական և ֆրանսիական երեք հայտնի բիենալեների՝ Ֆաենցոյի, Վորիքշիրի և Վալորիսի աշխատանքային չափանիշները և աջակցել նրանց ինքնուրույն մասնակցել այդ միջազգային հայտնի բիենալեներին: Այդ ծրագրի արդյունքում մասնակիցներից երկուսը դիմել և մասնակցել էին Անգլիական Վորիքշիրի բիենալեին:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է ՀՀ մշակութասեր երիտասարդներին, զբաղվածության խնդիրներ ունեցող, սեփական աշխատանքով գումար վաստակել չկարողացող երիտասարդներին առաջարկել խնդրի լուծումներ՝ վերազինելով նոր գիտելիքներով, օգնելով դրանք համատեղել այլ ոլորտի, օրինակ՝ զբոսաշրջայինի հետ: Սովորեցնել աշխատել ոչ ավանդական նյութերով՝ հասարակ թափոններին նայել այլ դիտանկյունից, դրանք օգտագործել որպես նոր աշխատանքների ստեղծման աղբյուր, դրանով իսկ խթանել երկրի բնապահպանությանը՝ համատեղելով օգտակարը եկամտաբերի հետ և ինքնուրույն հոգալ ծագած սոցիալական խնդիրները:

Ծրագրի ավրտին ակնկալում ենք ունենալ երիտասարդների ստացած նոր գիտելիքների հիման վրա ստեղծված աշխատանքներ, վերազինված գիտելիքների համադրում զբոսաշրջային աշխատանքի հետ: Ծրագրի արվեստաբանի միջոցով ամփոփիչ ցուցահանդեսին մասնակիցներին կծանոթացնենք զբոսաշրջային ոլորտի կայացած ընկերությունների և անհատների հետ՝ հետագայում համագործակցելու ակնկալիքով:

Վստահ ենք, որ իրենց ստացած փորձը կիրառելու դեպքում, վարակիչ օրինակ կլինեն տարեկից այլ երիտասարդների համար, ովքեր մտահոգ են նույն խնդիրներով:

Գործողություններ

Գործողություններ ծրագրի իրականացման համար. Ծրագրի իրականացումը կսկսվի 2021թ. հոկտեմբերի 15-ից, ծրագրի կազմակերպիչներս կվերահաստատենք ծրագրի իրականացման աշխատանքային պլանը, առաջին հայտարարությունը կտարածենք համացանցի միջոցով՝ ծրագրի մեկնարկի մասին հայտնելու և մասնակիցներին հավաքագրելու և գրանցելու համար: Հայտարարություն կդնենք նաև մեր ֆեյսբուքյան խմբում, առաջադրանք կտանք մեր հկ անդամներին, կամավորներին, անցած տարիների մեր մասնակիցներին, ովքեր մինչ այժմ մեզ հետ կապ են պահում: Նրանք ծրագրի մեկնարկի մասին կտեղեկացնեն իրենց ծանոթ երիտասարդներին՝ այդպիսով աջակցելով մասնակիցների ինքնաառաջադրումը ծրագրին մասնակցելու համար: Հաջորդ քայլը կլինի մինչ բուն միջոցառումների մեկնարկը, անհրաժեշտ պայմանագրերի կնքումը, անհրաժեշտ նյութերի ձեռքբերումը, ավելի մանրամասն օրերը կախված կլինեն այն անձանցից, ում հետ պետք է կնքվեն պայմանագրերը և հաշվապահական գործընթացի ճիշտ կիրառումից: Հաջորդ քայլին կքննարկենք հկ նախաձեռնող անդամների և ծրագրի իրականացնողների հետ մասնակիցների ընտրության հարցը և կընտրենք 20 մասնակից: Ընտրության ժամանակ մեծ ուշադրություն կդարձնենք արական և իգական սեռերի համամասնության վրա: Ընտրվող մասնակիցների տարիքը նախատեսվում է 16-30 տարեկան: Հաջորդ քայլը կլինի բուն միջոցառումների իրականացումը, որը կմեկնարկի 2021թ. նոյեմբերի 8-ին՝ առաջին հերթափոխի 10 մասնակիցների ժամանմամբ և մեկնում 2021-թ նոյեմբերի 18-ին, երկրոդ խմբի ժամանումը՝ 2021-թ նոյեմբերի 18-ին, 10 մասնակից 10 օր, մեկնում 2021թ-ի նոյեմբերի 27-ին: Բուն միջոցառումների ընթացքում ամեն խմբում տեղի կունենա 2-ական վարպետության դաս եռօրյա միջակայքով և 2-ական այց Տավուշի մարզի տեսարժան վայրեր՝ կրկին եռօրյա միջակայքով, ինպես նաև արվեստաբանի աշխատանք մասնակիցների հետ, ամեն խմբում ընդհանուր 10-ական ժամ՝ 5 օր, երկուական ժամով: Ծրագրի ավարտին՝ 2021թ նոյեմբերի 27-ին կկազմակերպվի մասնակիցների աշխատանքների ցուցահանդես Իջևան քաղաքում: 2021թ. Նոյեմբերի 26-ին՝ կատալոգի տպագրում, 2021թ. դեկտեմբերի 14-ին՝ հաշվետվության ավարտ և ծրագրի ավարտ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Ծրագրի տևողություն Երկու ամիս (15/10/2021 – 14/12/2021)

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Շաբաթ								
			1	2	3	4	5	6	7	8	9
1	Նախապատրաստական փուլ	Ծրագրի ղեկավար									

2	Պայմանագրերի կնքում, նյութերի ձեռքբերում	Ծրագրի համակարգող									
3	Ծրագրի բուն միջոցառումներ	Ծրագրի ղեկավար									
4	Կատալոգի տպագրում	Ծրագրի ղեկավար									
5	Հաշվետվությունների հանձնում	Ծրագրի ղեկավար									

Ծրագրի շահառուները և շահագրգիռ կողմերը

Ծրագրի ուղղակի շահառուներ են հանդիսանում՝ ՀՀ տարբեր մարզերի, Ջավախքի ու Արցախի (մեկական մասնակից) այն երիտասարդները, ովքեր 16-30 տարեկան են, ունեն մասնագիտական մշակութային կրթություն կամ մշակութասեր երիտասարդներ են, ովքեր ինքնուրույն աշխատում և ստեղծագործում են մշակույթի ոլորտում, ունեն սոցիալական և զբաղվածության խնդիրներ, ինչպես նաև ցանկություն ունեն զարգացնելու և նորացնելու իրենց մշակութային և աշխատանքային տեխնիկաների վերաբերյալ գիտելիքները, ուզում են դրանք համատեղել զբոսաշրջության ոլորտի հետ: Շահագրգիռ կողմեր են այն երիտասարդները, ովքեր պատրաստ են համագործակցել միմյանց հետ ՀՀ տարածքում կամ օրինակ՝ Հայաստանի մասնակիցը միգուցե կունենա փոխադարձ զբոսաշրջային այցելություն Ջավախք ու Արցախ: Շահագրգիռ կողմերն են նաև՝ ծրագրում ընդգրկված մասնակիցները, ծրագրի հեղինակները, այս ծրագիրը կարևորող համակիրները, ծրագրի իրականացման վայրի համայնքը: Ծրագրի շահագրգիռ կողմ կարող է հանդիսանալ նաև ՀՀ-ն, քանի որ սույն նախագծի իրականացումը առաջարկում է մի խումբ հայ երիտասարդների խնդիրների լուծումներ: ՀՀ-ն որպես շահագրգիռ կողմ կարող է ներգրավված լինել այս ծրագրի հովանավորությանը, տեղական ինքնակառավարվող մարմինների և պետական այլ կառույցների համագործակցությանը: Ծրագրով հետաքրքրված և շահագրգիռ խմբերը ներգրավված կլինեն ծրագրին հետևյալ կերպ՝ ծրագրում աշխատելու են կամավորներ ՀՀ ողջ տարածքից, առցանց սկզբունքով և փնտրելու են մասնակիցներ մեր ծրագրի համար՝ տարածելով հայտարարություններ էլ ցանցով և իրենց ծանոթ կառույցների շրջանակներում՝ Գեղարվեստի ինստիտուտ, մասնաճյուղեր, մշակույթով զբաղվող այլ ստեղծագործական խմբեր ու իրենց համայնքներում: Ցուցահանդեսի կազմակերպման ողջ ընթացքում արվեստաբանի հետ պետք է աշխատեն վերոնշյալ երիտասարդները, նրանք նաև կմասնակցեն ծրագրի ամփոփիչ կատալոգի կազմմանը, ամփոփիչ ֆիլմի նկարահանումներին՝ միմյանց փոխարինելով նկարելով շուրջը տեղի ունեցածը: Տավուշի մարզի տեսարժան վայրերի այցելությունների ժամանակ կազմակերպիչների հետ կկատարվեն կազմակերպչական և իրականացման աշխատանքներ: Ծրագրի շահագրգիռ կողմ հանդիսացող երիտասարդները մեզ կօգնեն նախապատրաստական փուլում. ծրագրի հաջող ընթացքը ապահովելու համար նրանք նախապատրաստական աշխատանքներ կանցկացնեն մեր կողմից նախապես վարձած տանը:

Ռիսկերի գնահատում

Ծրագրի նախապատրաստական փուլում ռիսկերն են՝ նախապես ընտրված տան վարձակալության հետ կապված հնարավոր բարդությունները, սակայն եթե նախօրոք պայմանավորված տան վարձակալության հետ խնդիրներ առաջանան (օրինակ՝ մինչ մեր ժամանումը ուրիշին հանձնելը), ծրագրի տեղաբնակ կամավորները մեզ համար կգտնեն այլ տուն: Նման խնդիր նախկինում արդեն ունեցել ենք, որը շատ արագ (երկու օրում) հարթվել է տեղաբնակ համակիր կամավորների օգնությամբ, նույնիսկ եղել են անվճար տարբերակների առաջարկներ: Դրամաշնորհին դիմելուց առաջ մենք դա նախապես քննարկել ենք և նրանց առաջարկել այս խնդրի շուրջ աշխատանքներ տանել: Դրամաշնորհը ստանալու դեպքում, եթե մեր նախնական այցից առաջ նկատենք նման խնդիր, անմիջապես դրանով կզբաղվեն՝ առաջարկելով մի քանի այլ տարբերակ: Եթե ինչ-ինչ պատճառով լինեն տրանսպորտային խնդիրներ, ապա մենք կօգտագործենք մեր և մեր համակրների ավտոմեքենաները: Այլ խնդիրների ծագման դեպքում հարցը կլուծենք օգտագործելով մեր բազմամյա փորձը համագործակցելով և խորհրդակցելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ Ձեզ հետ: 2002թ. մինչ այսօր մեր բոլոր իրականացրած ծրագրերի ընթացքում, եթե եղել են խնդիրներ, ապա դրանք հարթվել են ամենիջապես՝ շնորհիվ մեր փորձի, կազմակերպվածության և արագ արձագանքող հրաշալի համակիրների: Բացի այդ, Ծրագրի իրականացման ողջ ընթացքում պահպանվելու են COVID-19 համավարակի հետ կապված բոլոր կանխարգելիչ միջոցառումները, մասնավորապես՝ վարձակալված տան բոլոր սենյակների, մասնակիցներին տրամադրվող բոլոր նյութերի և պարագաների պատշաճ ախտահանում, նվազագույն տարածության ապահովում և այլն: Ծրագրի բոլոր մասնակիցները կապահովվեն անհրաժեշտ ախտահանիչ նյութերով և դիմակներով:

Ծրագրի աշխատակազմը

Ծրագրում ներգրավված աշխատողները պարտավոր են իրենց վստահված աշխատանքները կատարել բարեխղճորեն և ժամանակին՝ միմյանց տեղեկացնելով կատարված աշխատանքների մասին: Ծրագրի ղեկավարը պարտավոր է ծրագրի ողջ ընթացքում մասնակցել և վերահսկել բոլոր գործընթացները՝ հիմք ընդունելով ծրագրի ժամանակացույցը: Վերջինս պետք է հետևի նախապատրաստական փուլում մասնակիցների հավաքագրման, նրանց ընտրության, պայմանագրերի ճիշտ կազմման, անհրաժեշտ նյութերի ձեռքբերման, մասնակիցների համար նախօրոք վարձակալված տան բարեկարգման և նախապատրաստման աշխատանքներին: Ծրագրի իրագործման փուլում Ծրագրի ղեկավարը պարտավոր է մասնակցել բոլոր գործընթացներին՝ դիմավորել և տեղավորել մասնակիցներին, հետևել խմբերի աշխատանքային ողջ ընթացքին, հետևել և մասնակցել բոլոր երեք դասավանդողների դասավանդման ընթացքին: Ղեկավարը պետք է վերահսկի նախապես պլանավորված միջոցառումների իրագործումը, մասնակիցների՝ Տավուշի մարզի տեսարժան վայրեր մեկնելը, մասնակիցների շահագրգիռ բարեկամների և կամավորների հետ համատեղ ավարտական ցուցահանդեսի կազմակերպումը, կատալոգի տպագրումը, ինչպես նաև

ծրագրի իրականացման ողջ ընթացքում հակահամաճարակային բոլոր կանոնների պահպանումը: Ծրագրի ավարտական փուլում պետք է հետևի ծրագրի ավարտական փուլի ճիշտ կազմակերպմանը, բոլոր համապատասխան փաստաթղթերի ճիշտ կազմմանը և հաշվետվությունների կազմմանը ու հանձնմանը: Ծրագրի համակարգողը պարտավոր է մասնակցել ծրագրի բոլոր երեք փուլերին՝ նախապատրաստական, իրագործման և ավարտական: Ծրագրի նախապատրաստական փուլում նա պարտավոր է կապեր հաստատել, վերահսկել ու կազմակերպել մասնակիցների հավաքագրման, հայտարարությունների տարածման, ընտրության աշխատանքները, կապ հաստատել և համագործակցելով աշխատել ծրագրի հաշվապահի հետ, մասնակցել անհրաժեշտ նյութերի ձեռքբերման, պահպանման և կամավորների ու շահագրգիռ համակիրների միջոցով դրանք, ըստ խմբաքանակի, տեղափոխման աշխատանքներին: Ծրագրի համակարգողը պարտավոր է նաև կապ հաստատել ծրագրի մասնակից երեք դասավանդողների հետ և համակարգել նրանց աշխատանքները, ակտիվ կապի մեջ լինել ծրագրի ղեկավարի, կամավորների, աջակցող վարորդների, շահագրգիռ կողմերի հետ: Ծրագրի իրագործման փուլում ծրագրի համակարգողը պարտավոր է ակտիվ կապի մեջ լինել և համակարգել աշխատանքը ծրագրի ղեկավարի, հաշվապահի, կամավորների ու համակիրների հետ, այդ ամենը կնպաստի ծրագրի ավարտը լավ կազմակերպելուն: Ծրագրի երեք դասավանդողները ընդգրկված կլինեն ծրագրի իրագործման փուլում, նրանք պարտավոր են՝ ժամանակին և լավ պատրաստված իրականացնել իրենց վարպետության դասերը, դրանք անցկացնել հասկանալի և մատչելի կերպով՝ հաճախակի դիմելով գործնական աշխատանքի: Օրինակ՝ առաջին դասավանդողը մասնակիցներին պարտավոր է բացատրել և գործնականում իրականացնել ապակյա իրերի վրա նկարչական աշխատանքներ, ստեղծել բատիկայից շարֆեր կամ գլխաշորեր: Երկրորդ դասավանդողը պարտավոր է մետաղական, քարե կամ փայտյա թափոններից ստանալ առնվազն մեկ քանդակային հուշանվեր՝ ցուցադրելով և բացահայտելով դրա գործնական գաղտնիքները: Արվեստաբան դասավանդողը պարտավոր է ծրագրի իրականացման ընթացքում մասնակիցներին ներկայացնել զբոսաշրջային կառույցների հետ աշխատելու հմտությունները՝ ինչպես մշակույթը օգտագործել որպես մշակութային զբոսավարի գործիք: Վերջինս պետք է նաև ծրագրի միջոցառումների ավարտի վերջին օրը մասնակից երիտասարդների, կամավորների և համակիրների օգնությամբ կազմակերպի ցուցահանդես: Արվեստաբանը կնախաձեռնի նաև մասնակիցներին կատալոգի պատրաստման և տպագրման աշխատանքերին ծանոթացնելու գործընթացը: Ծրագրի արվեստաբան դասավանդողը պարտավոր է նաև ծրագրի միջոցառումների ընթացքում մասնակիցներին որպես արվեստաբան-զբոսավար ուղեկցել Տավուշի մարզի տեսարժան վայրեր և այդ ողջ ընթացքում կատարել մշակույթային զբոսավարի աշխատանք՝ այդպիսով իրականացնելով իր տեսական դասերի գործնական մասերից մեկը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Մշակութային շարժում»

	անվանումը	բովանդա-կությունը	Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործա-ռույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնա-հատման չափանիշները	Միջոցառման իրականացման վերջնաժամկետը	Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
	Գործողություն 1	Նախապատրաստական փուլ	Մասնակիցներին ներգրավելու հայտարարությունների տարածում սոց. ցանցերի միջոցով, Մասնակիցների, աշխատակազմի և մատակարարների հետ կնքվելիք պայմանագրերի պատրաստում, անհրաժեշտ նյութերի ձեռքբերման վերջնական պայմանավոր-վածություններ, Այցելություններ Իջևան՝ տարածքի վարձակալություն, տարածքի նախապատրաստման աշխատանքներ՝ մաքրություն, դասավորում, առկա նյութերի և միջոցների տեղափոխում:	Անհրաժեշտ վիճակի բերված տարածք, Կնքման ենթակա պայմանագրեր,	27/10/2021	15/12/2021	0
	Գործողություն 2	Պայմանագրերի կնքում, նյութերի ձեռքբերում	Մասնակիցների, աշխատակազմի և մատակարարների հետ պայմանագրերի կնքում, անհրաժեշտ նյութերի ձեռքբերում	Ծրագրի մասնակիցների, աշխատակազմի և նյութերի մատակարարների հետ կնքված անհրաժեշտ պայմանագրեր:	07/11/2021	15/12/2021	758.000

Գործողություն 3	Ծրագրի բուն միջոցառումներ	Ծրագրի բուն միջոցառումները կսկվեն մասնակիցներին Իջևան քաղաքում դիմավորելով և իրականացման վայր, տուն, տեղափոխելով	Ծրագրով նախատեսված դասերի անցկացում, աշխատանքների ստեղծում,ցուցահանդեսի կազմակերպում և իրականացում:	08/11/2021	15/12/2021	1,278.000
Գործողություն 4	Կատալոգի տպագրում	Հետևել կատլոգի նախնական համաձայնության ճիշտ կազմման և ժամանակացույցին ու պահանջներին համապատասխան տպագրմանը	Ակնկալվող արդյունքն է կատալոգի որակյալ և նախնական պահանջներին համապատասխան առկայությունը	26/11/2021	14/12/2021	160.000

Ընդամենը 2,196.000

ԱԱՀ՝ 439.200

Ընդամենը 2,635.200

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Մունետիկ» մանկապատանեկան մշակութային ՀԿ
ք. Երևան, Ջիվանի 16, 2-րդ արվեստանոց
munetik_haj@yahoo.com

բանկ՝ Բիբլոս բանկ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸՄ Մալաթիա մ/ճ, ք. Երևան, Անդրանիկի 113/1 Հ/Հ 2140001275290100, ՀՎՀՀ02562717

ՀԿ-ի ղեկավար՝
Հրաչյա Համբարձումյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 2

15.10.2024թ ԵՔԴՄ- 08 **ծածկագրով**
դրամաշնորհային մրցույթի հրավերի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու «Մունետիկ» մանկապատանեկան մշակութային ՀԿ
Ծրագրի անուն «Մշակութային շարժում»

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Համաֆինանսավորվող գումարը (ՀՀ դրամ)	Ընդհանուր Պահանջվող և Համաֆինանսավորվող գումարները
	Աշխատավարձ						
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**						
1.1	Հաշվապահ	ամիս	1	120,000	120,000	0	120,000
1.2	Դասավանդող 1	ժամ	8	3,500	28,000	0	28,000
1.3	Դասավանդող 2	ժամ	8	3,500	28,000	0	28,000
1.4	Արվեստաբան դասավանդող	ժամ	20	3,500	70,000	0	70,000
Ա2	**Ղեկավար անձնակազմի աշխատավարձ**						
1.1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	2	65,000	130,000	0	130,000
1.1.2	Ծրագրի համակարգող	ամիս	2	70,000	140,000	0	140,000
Ընդամենը Ա					**516,000**		**516,000**
Բ	**Ծրագրային ծախսեր**						
2.1	Կատալոգի պատրաստ	հատ	80	2,000	160,000	0	160,000

	ում և տպագրում						
2.2	Կտավ	հատ	60	5,000	300,000	0	300,000
2.3	յուղաներկ	հատ	100	1,200	120,000	0	120,000
2.4	Վրձին	հատ	40	1,200	48,000	0	48,000
2.5	լուծիչ	հատ	20	1,800	36,000	0	36,000
2.6	Բատիկի կտոր ձգված պոդրամնի կին	հատ	40	5,000	200,000	0	200,000
2.7	Բատիկի ներկեր	հատ	40	1,000	40,000	0	40,000
2.8	Բատիկի եզրահեղուկ	հատ	10	1,400	14,000	0	14,000
Ընդամենը Բ					**918,000**		**918,000**
Գ	**Գործուղում**						
3.1	Մասնակիցների սնունդ- 1-ին խումբ	օր	10	30,000	300,000	0	300,000
3.2	Մասնակիցների սնունդ- 2-րդ խումբ	օր	10	30,000	300,000	0	300,000
3.3	Աշխատակազմի սնունդ (2 անձ)	օր	20	6,000	120,000	0	120,000
3.4	Դասավանդողների սնունդ (2 անձ)	օր	2	6,000	12,000	0	12,000
3.5	Արվեստաբան	օր	10	3,000	30,000	0	30,000

	դասավանդողի սնունդ						
3.6	Ծրագրի աշխատակազմի և մասնակիցների տեղափոխում*				0	110,000	
Ընդամենը Գ					**762,000**		**872,000**
Ընդամենը Դ							
Ընդամենը					**2,196,000**	**110,000**	**2,306,000**
ԱԱՀ					**439,200**		
ԸՆԴԱՄԵՆԸ					**2,635,200**		

Դրամաշնորհառու «Մունետիկ» մանկապատանեկան մշակութային ՀԿ
Ծրագրի անուն «Մշակութային շարժում»

ՀՀ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**		
1.1	Հաշվապահ	120,000	Հաշվապահի 1 ամսվա աշխատավարձ
1.2	Դասավանդող 1	28,000	Յուրքանչյուր խմբի հետ 2-ական օր, օրական 2 ժամով, ընդհանուր՝ 8 ժամ, 1 ժամի համար նախատեսվող հոնորորը՝ 3,500 ՀՀ դրամ
1.3	Դասավանդող 2	28,000	Յուրքանչյուր խմբի հետ 2-ական օր, օրական 2 ժամով, ընդհանուր՝

			8 ժամ, 1 ժամի համար նախատեսվող հոնորարը՝ 3,500 ՀՀ դրամ
1.4	Արվեստաբան դասավանդող	70,000	Յուրքանչյուր խմբի հետ 5-ական օր, օրական 2 ժամով, ընդհանուր՝ 20 ժամ, 1 ժամի համար նախատեսվող հոնորարը՝ 3,500 ՀՀ դրամ
Ընդամենը Ա1			**246,,000**
Ա2	**Ղեկավար անձնակազմի աշխատավարձ**		
1.1.1	Ծրագրի ղեկավար	130,000	Ծրագրի ղեկավարի 2 ամսվա (ծրագրի իրականացման ամբողջ ժամանակաշրջանի համար) աշխատավարձ՝ ամսական 65,000 ՀՀ դրամ
1.1.2	Ծրագրի համակարգող	140,000	Ծրագրի համակարգողի 2 ամսվա (ծրագրի իրականացման ամբողջ ժամանակաշրջանի համար) աշխատավարձ՝ ամսական 70,000 ՀՀ դրամ
Ընդամենը Ա2			**270,000**
Ընդամենը Ա			**516,000**
	Ծրագրային ծախսեր		
2.1	Կատալոգի պատրաստում և տպագրում	160,000	Համաձայն ֆինանսական նախահաշվի
2.2	Կտավ	300,000	Համաձայն ֆինանսական նախահաշվի
2.3	Յուղաներկ	120,000	Համաձայն ֆինանսական նախահաշվի
2.4	Վրձին	48,000	Համաձայն ֆինանսական նախահաշվի
2.5	Լուծիչ	36,000	Համաձայն ֆինանսական նախահաշվի
2.6	Բատիկի կտոր ձգված պոդրամնիկին	200,000	Համաձայն ֆինանսական նախահաշվի

2.7	Բատիկի ներկեր	40,000	Համաձայն ֆինանսական նախահաշվի
2.8	Բատիկի եզրահեղուկ	14,000	Համաձայն ֆինանսական նախահաշվի
Ընդամենը Բ			**918,000**
Գ	**Գործուղում**		
3.1	Մասնակիցների սնունդ-1-ին խումբ	300,000	Մասնակիցների առաջին խմբի սննդի հաշվարկն իրականացված է հետևյալ կերպ. 10 մասնակից, 10 օր, յուրաքանչյուր մասնակցի համար օրական 3,000 ՀՀ դրամ սննդի գումար՝ ընդհանուր – 300,000 ՀՀ դրամ
3.2	Մասնակիցների սնունդ-2-րդ խումբ	300,000	Մասնակիցների երկրորդ խմբի սննդի հաշվարկն իրականացված է հետևյալ կերպ. 10 մասնակից, 10 օր, յուրաքանչյուր մասնակցի համար օրական 3,000 ՀՀ դրամ սննդի գումար՝ ընդհանուր – 300,000 ՀՀ դրամ
3.3	Աշխատակազմի սնունդ (2 անձ)	120,000	Աշխատակազմի սննդի հաշվարկն իրականացված է հետևյալ կերպ. 2 անձ (ծրագրի ղեկավար և ծրագրի համակարգող), յուրաքանչյուրը 20 օր, յուրաքանչյուր աշխատակցի համար օրական 3,000 ՀՀ դրամ սննդի գումար՝ ընդհանուր – 120,000 ՀՀ դրամ
3.4	Դասավանդողների սնունդ (2 անձ)	12,000	Դասավանդողների սննդի հաշվարկն իրականացված է հետևյալ կերպ. 2 անձ, յուրաքանչյուրը 2 օր, յուրաքանչյուր մասնակցի համար օրական 3,000 ՀՀ դրամ սննդի գումար՝ ընդհանուր – 12,000 ՀՀ դրամ
3.5	Արվեստաբան դասավանդող	30,000	Արվեստաբան դասավանդողի սննդի հաշվարկն իրականացված է հետևյալ կերպ. 1 անձ, 5-ական օր յուրաքանչյուր խմբի հետ,

			օրական 3,000 ՀՀ դրամ սննդի գումար՝ ընդհանուր – 30,000 ՀՀ դրամ
Ընդամենը Գ			**762,000**
Ընդամենը			**2,196,000**
ԱԱՀ			**439,200**
ԸՆԴԱՄԵՆԸ			**2,635,200**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Մունետիկ» մանկապատանեկան մշակութային ՀԿ
ք. Երևան, Ջիվանի 16, 2-րդ արվեստանոց
munetik_haj@yahoo.com
բանկ ՝ Բիբլոս բանկ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸՄ
Մալաթիա մ/6, ք. Երևան, Անդրանիկի 113/1
Հ/Հ 2140001275290100, ՀՎՀՀ02562717
ՀԿ-ի ղեկավար՝

Հրաչյա Համբարձումյան

/ստորագրություն/

Կ.Տ.